ձեռամբ տէր յօսէփին Մատաթեան. 4. մարտի շէն կենայ, Աստուած վարձատրէ. ամէն։

Սուրբ Յարութեանն առինք մէկ գառ մէկ մանէթի. շամախեցի աղա Գէորքն մեզի ուղարկել էր մէկ զոթխի ձուկն, և մէկ ամանով խաւիար, մեք եւս առինք երկու զուլթխի ձուկն զատկին վայելելու։ Մէկ սհաթ ունէի ծախեցի քսան մանէթի. խարճի չունէի։ Շամախեցի աղա Պետրոսն Ներսէսեան մեզի ուղարկել էր երեք գրվանքայ զայֆայ և մէկ դաստայ թուղթ գրելու. շէն կենայ։ Սալեանու նաչալնիկ աբիցար աղա Ղեւոնդ Վարդանեան. ապրիլի 25ին ուղարկել է մեզի տասն լիտր բրինձ, չորս զուլթխի ձուկն և մէկ տոպրակ խաւիար. շէն կենայ։ մեր աբեղա Գէորգ վարդապետին առինք մէկ վերարկու մահուտից հինգ պաճախլու ոսկոյ։ մայիսի. 8 ին գնացի Շամախու քաղաքի հանգստարանն, զոր Գօքչաով Գէորք աղէն նոր եկեղեցի էր շինել տալիս տեսնելու[1]). գնացի ըստ որում վեց ամիս էր որ օթախիցս դուս չէի գնացած սրտիս ապահովութիւն տալու աղագաւ գնացի. անտի գնացի Մատրասա գիւղի եկեղեցին եւս տեսի. նոյն օրն դարձա իմ խուղն. տեսի որ յերկրիս նոր արք եպիսկոպոս է եկել Զախալեան Ստեփաննոս Մետրապօլիտն. մնաց այս աւերակ վանքումս երկու օր. մինչ որ շամախու իշխանքն եկին հրավիրեցին քաղաքն. մայիսի 11ին գնաց շամախի քաղաքն. տէր յաջողէ գգործս իւր։ 1837 յունսի 10ին կարբեցի Յոհաննէս կաթուղիկոսէն եկն հրաման վերադառնալ Սուրբ Էջմիածին։ յունսի 19ն շամախու յառաջնորդն և երվելի իշխանք հրավիրեցին շամախի։ Հրավիրողքն էին. Մատաթեան տէր Յոսէփ աւաք քահանէն և աղա Աթանաս Լալաով. հանդերձ մէկ գլուխ շաքարով. 20ին մըտանք շամախի յառաջնորդարանն. ընդ յառաջնորդին կէս օրվայ հայն վայելեցինք և ապա գնացաք մեծահաւատ պատվելի իշխան աղա Պետրոս Ներսէսեան օրհնեալ տուն. որ նման է հայր Աբրահամի տանն, 9 օր անդ հանգայք, ապա կիրակի աւուրն. որ էր յունսի 23. պատարագ մատուցի. եղեւ ժամուց. 22 մանէթ. երկուշաբտի Աթանաս Լալաովն տարաւ չայի և հացի հանդերձ

---

[1]) Գերեզմանատան եկեղեցին 1887 թուին աւերակ տեսի։